



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՊԵՐԱ

ԼԻԲՐԵՏՏՈ խ 6

ԿԱՐՄԵՆ

Որոշում չորս / գործադրության

Յերածանություն՝

ԲԻԶՆԵՑԻ

Հաս՝

ՄԵՐԻՄԵՑԻ

Լիբրես՝ ՄԵԼՅԱԿ լիվ ՀԱԼԵԿԻ

Յերածանական տեսություն լիվ համապատասխանության
կարգում՝ ՌՈՒԲԵՆ ԹԵՐԼԵՄԵՆՏՆԻ


Յ Ե Ր Ե Վ Ա Ն 1934

7 792.4
34

LE- DEC 2017



Բիգե



Պատկեր. գլուխ 178. պատ. 165. տպագր. 1000

ԺՈՐԺ ԲԻԶԵ

(1838 — 1875)

Ֆրանսիացի կոմպոզիտոր Ժորժ Բիզեն ծնվել է 1838 թվի հոկտեմբերի 25-ին Պարիզում։ Վախճանվել է 1875 թվի հունիսի 3-ին։ Նրա հայրը Պարիզում լերգեցողության ուսուցիչ էր։ Ինը տարեկան հասակում Ժորժ Բիզեն կոնսերվատորիա մտավ։ Նրա ուսուցիչներն էին Մարմոնեսել (դաշնամուր), Բենոիս (յերգեհոն), Յիմերման (ներդաշնակույթուհ) և Հալվիլ (կոմպոզիցիա)։

Ինուս կոնսերվատորիայի ուսանող՝ Բիզեն գրեց մի շարք աշխատութուններ։ Կոնսերվատորիան ավարտելուց հետո, նա ասեղծագործեց լերեք սինֆոնիա, նրա գրած 40 յերգեր հրատարակվեցին յերկու տետրակներով։ Բիզեն գրեց մի շարք այլ ոպերային ու ինստրումենտալ յերկեր։

Սակայն Ժորժ Բիզեն համաշխարհային կոմպոզիտորի անուն վաստակեց «Կարմեն» ոպերայով։ Հեղինակի լերածշտական մյուս գործերն հիմա բոլորովին մոռացված են։ Նույն վիճակն ունեն այսօր Ֆրանսիայի յեր, կու կոմպոզիտորներ՝ Թուման (1811—1896) և Դուլոն (1818—1893)։ Թուման հայտնի է «Մինյոն», իսկ Դուլոն «Ռումեո յել Զուլեսսա» ու «Փաուս» ոպերաներով, թեև վերահիշյալ յերկու հեղինակները գրել են բազմաթիվ այլ գործեր։ Թուման և Դուլոն ապրեցին խորը ծերու-

թյուն և ականատես յեղան իրենց աշխատություններէ հաջողությանը: Բիզնիս վախճանվեց այն ժամանակ, յերբ գեուս «Կարմենը» լրիվ հաջողություն չկարողացավ գտնել իր հալըննիքում: Անդամ «Կարմեն»-ի առաջին բեմադրությունը (1875 թվի մարտի 3-ին Պարիզում) ֆիասկոյի հանդիպեց, Սակայն հեղինակի մահից հետո, վերոհիշյալ ունեւան հակայական աղմուկ հանեց և բեմադրվեց համարյա բոլոր յերկրներում: Յերաժշտական քննադատությունը «անմահ ուղեւոր» յանվանել Բիզնիս «Կարմեն»-ը:

«Կարմենի» հաջողությունը պիտի վորոնել յերեք կարեւոր հանգամանքների մեջ, առաջին՝ մեկուկի չափազանց վառ գույները, յերկրորդ՝ խոր դրամատիկ սյուժետը և յերրորդ՝ բովանդակության կենդանի արտահայտությունը: Սրանք «Կարմենի» և Մեյերբերյան օպերաների միջև ստեղծագործական սկզբունքների առհմանագիծ ընդգծեցին: Մեյերբերյան վոճի ուղերւնները պատկերացված են պատմական կեղծ շքեղությամբ: «Կարմենը» իր ամբողջ կառուցվածքով, ամենից առաջ, ուղղված պայքար է նման օպերաների դեմ: Այս է գլխավոր պատճառներից մեկը, վոր «Կարմեն»-ը մեր որերում չի կորցրել իր այժմեականությունը, և դրավում է մեծ տեղ, ինչպես կենդանի, տաղանդավոր մի գործ, վորը պարզ ճանապարհ է ցույց տվել, շքեղ, հանդիսավոր կեղծ օպերաներից անցնել յերաժշտական դրաման և վորը լի է հասկանալի կոնկրետ, խոր բովանդակությամբ:

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

ԿԱՐՄԵՆ — Մեցցո սոպրանո
ՖՐԱՍԿԻՏԱ — սոպրանո
ՄԵՐՍԵՏԵՍ — Մեցցո սոպրանո
ՄԻԿԱՅԵԼԱ — սոպրանո
ԽՈՉԵ — տենոր
ՅՈՒՆԻԳԱ — Բաս
ԽՈՌԱԼԵՍ — Բաս
ԵՍԿԱՄԻԼԻՈ — Բարձր Բաս (Բարիտոն)
ԳԱՆԿԱԼԻՈ — տենոր
ՌԵՄԵՆՏԱՏՈ — Բաս

Գործողության վայրը՝ Սեվիլիս (Իսպանիա). ժամանակ՝ 1820 թիվ:

Նախնորդանք

«Կարմեն»-ը սկսվում է նախնորդանքով, հիմնված յերեք թեմաների վրա, վորոնք մեծ դեր են խաղում վողջ ուղերայում: Առաջին թեման հանդիսավոր, քայլերգի բնույթ ունի: Յերկրորդը՝ տորեատոր հսկամիլիոյի թեման է: Այս յերկու պայծառ թեմաները վերջանում են և մեծ պառակտից հետո հնչում է դրակիկ թեման, վորի մեջ մենք տեսնում ենք թողելի սիրտ ուրտահայտումը գեպի ուղերայի հերոսունին Կարմենը:

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Հրապարակ Սեվիլիայում: Միախոսի գործարան: Նրա կողքին գինվորական պանակայտումը:

Հրապարակի վրա չեռ ու գեռ է շարժվում է ամբողջը: Այդ ամբողջից դուրս է գալիս գյուղացի աղջիկ Միկայելան, փնտռելով Դոնխոտելին: Հեռվից լսվում է գինվորական պահակախմբի հերթափոխության աղգանշանը: Հնչում է քայլերգ և ապա փողոցային յերեքաների խմբերգը:

Գործարանից դուրս են գալիս բանվորունիներ. յերեզում է նաև Կարմենը՝ շրջապատված բանվորունիներով: Կարմենը յերգում է իր նշանավոր յերգը՝ «խաբանեում»: Բիզեն «խաբանեում» յերգի մեկուղիայի ելե-

մենտները վերցրել է կալանական յերգերից (հարավ Ամերիկիան մեկուղիաներ): Խաբանեում, այդ յերգը իբրացրոգ, կրքոտ մինորով և թեթև, աշխուժ մաժորով հափուգանց բնորոշ է Կարմենի համար:

Կարմենն սկսում է խոսել թողելի հետ: Վերջինին առաջարկութլումը բարեացնում է Կարմենին, վորը թողելի դեմքին ծաղիկ է ձգում և հեռանում: Գործարանի գանգը բոլորին աշխատանքի է կանչում: Թողելն մնում է մենակ: Գալիս է Միկայելան, վորը թողելին հալոնում է իր մոր բարենները: Նրանք միասին յերգում են: Լիրիքական դուետում թողելն և Միկայելան վերհիշում են իրենց հայրենի սարերն ու տունը:

Գործարանից լսվում է ձիչ և աղմուկ. բանվորունիները դուրս են վազում: Պարզվում է, վոր Կարմենն կռվել է բանվորունիներից մեկի հետ՝ վիրավորելով նրան: Տեղի ունեցած դեպքի առթիվ սպա Յունիդան Կարմենին հարցաքննության է յենթարկում: Կարմենը պատասխանում է արհամահական յերգով. սպա Յունիդան թողելին հրամայում է Կարմենին բանտ նստացնել: Կարմեն և թողելն մնում են մենակ: Ցանկանալով ազատվել, Կարմենը խոստանում է սիրել թողելին յեթե միայն նա ազատ թողնի իրեն: Կարմենը թողելին յերգում է Սեզեդիլիա, մի յերգ, վորը իսպանական պարի ռիթմ ունի: Սեզեդիլյան իր կառուցվածքով, իր արտահայտիչ բնավորութլամբ հանդիսանում է ուղերայի լավագույն յերաժշտական համարնե-

քից մեկը: Խոզեն սիրահարված ու կախարդված՝ աղաւ
ե արձակում Կարմենին:

ՅԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Յերկրորդ գործողութեան որկեստրային նախեր-
գանքը կառուցված է ալկալական դինվորների յերգի
մելոդիաների վրա: Այդ մելոդիան նկարագրում է աղ-
նիվ յերիտասարդին, Խոզեյին միջև նրա հանդիպումը
Կարմենի հետ:

Գինետանը: Գիշեր: Յերկու ամիս է անցել Կարմենի
և Խոզեյի ծանոթութեանից հետո: Գինետանը նստել
էն կոնտրաբասնիստները, գնչուները, զինվորները: Այն
աեղ է նաև Կարմենը: Յերգում են ու պարում: Ներսեմը ա-
նում Եսկամիլիոն: Նա յերգում է իբ կուպլետներ,
գրավելով Կարմենի ուշագրութեանը: Բոլորը հեռանում
են: Կոնտրաբասնիստներից յերկուսը Տանկախոն և
Ռեմենտատոն՝ Կարմենին կարևոր գործով կանչում են և
առաջարկում են իրենց հետ մեկնել, սակայն նա հրա-
ժարվում է: Կարմենն սպասում է Խոզեյին, վորին
սիրում է: Յերկու կոնտրաբասնիստներ Կարմենին հա-
մողում են Խոզեյին հրավիրել իրենց շարքերը: Մոաե-
նում է Խոզեն. Կարմեն ուրախ յերգում է: Հեռվից
լսվող տրուբայի հնչյունները Խոզեյին վառ են կան-
չում: Կարմենի ուրախ յերգը և տրուբայի աղգանշանը,
այս յերկու յեղանակները պարզ կերպով բնորոշում
են Խոզեյի տրագիկ գրութեանը: Մի կողմից Կարմենը,

վորին նա սիրում է, իսկ մյուս կողմից ծառայութեան-
ը, պարտականութիւնները—անհայտախառն անտանե-
լի գրութեան մեջ է գտնվում Խոզեն: Նա Կարմենին
յերգում է իր սիրո մասին. սակայն Կարմենը չի ըն-
գունում այնպիսի սեր, վորը կապված է դինվորական
պարտականութեանների հետ: Կարմենը Խոզեյին առա-
ջարկում է դառնալ ազատ մարդ և իր հետ փախչել ա-
քերը: Խոզեն տատանվում է: Ներսեմ և մտնում աղա-
Յունիգան և ծաղրի յե յենթարկում Խոզեյին: Խոզեն
հարձակվում է նրա վրա: Խոզեն այլևս անկարող է
վառ վերադառնալ: Կանքի ուղին արդեն փոխվել է:
Նա ընկնում է Կարմենի զիրկը: Գնչուները վողջու-
նում են իրենց խմբի նոր անդամին:

ՅԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Յերկրորդ գործողութեան որկեստրային նախերգանքը
Քիզեն վերցրել է իր «Արեմգիանկա» յերաժշտական յեր-
կից: Թեմատիկական տեսակետից վերոհիշյալ յերաժշ-
տութեան և «Կարմեն»-ի միջև առնչութեան չկա: Սա
մի պոետական յերաժշտական պատկեր է, վորը ունե-
նդիրներին պատկերացում է հարավային գիշեր լեռնե-
րում, վորի ֆոնի վրա կատարվելու են յերրորդ գոր-
ծողութեան վողբերգական անցքեր:

Անմարդաբնակ սարերում լուռ գիշեր: Լեռներից
իջնում են կոնտրաբասնիստները: Խոզեն մտածում է
իբ հայրենիքի մասին և հիշում է իր պառավ մորը:
Կարմենը Խոզեյին հետևյալ խոսքերն է ուղղում:

«գնա, շատախի՛ր նրա մոտ. ինչո՞ւ յես դանդաղում. մեր
 կլանքը՝ քեզ համար չե՞ս: Այս խոսքերի վրա, Խոզեն
 ապառնալից նայում է իր սիրուհուն: Կարմենը տեսն-
 ւով նրա զայրուլի՛ն ու ապառնալիքը, ասում է «Ի՞նչ
 է, ուզում ես սպանել ինձ, միկնուլն ես, յես ճակատա-
 դրից չեմ վախենում»: Յրասկիտայի և Մերսետեռի
 կենսաւրախ լերդի Ֆոնի վրա, Կարմենի մոռլլ մոռիվը
 հնչում է առանցնապէս կոնտրաստային: Բացվող կարտե-
 տը ցույց են տալիս Կարմենի մահը: Թյուրահոլմաս
 գնչուհին հաժաաւում կարտերին, վճռում է հնազանդ-
 վել իր ճակատագրին:

Գիշերային մթության մեջ լերեւում է Միկայելան.
 նա վճռել է գտնել Խոզելին ու նրան տանել հայրե-
 նիք: Միկայելան գտնում է Խոզելին աչն ժամանակ,
 լերբ նա հրացան է արձակում Եսկամիլիոյի վրա: Ես-
 կամիլիոն ներս է վազում: Նա չեկել է Կարմենին վո-
 րոնելու: Խոզեն և Եսկամիլիոն, ալգ լերկու հակառա-
 կորդներն սկսում են կռիւ: Հենց աչն լողելին, լերբ
 Խոզեն պատրաստում է դանակով խփել Եսկամիլիոյին,
 Կարմենը բռնում է նրա ձեռքը: Եսկամիլիոն հեռանում
 է, հրավիրելով բոլորին Սեվիլիա:

«Միբում է նա, ով կգա», ասում է նա Կարմենին:
 Ներս է մտնում Միկայելան, խնդրելով Խոզելին
 հայրենիք վերադառնալ, նա հայտնում է, վոր իր պա-
 ռով մայրը մահամերձ հիվանդ է: Խոզեն վճռում է
 վերադառնալ հայրենիք. նա Կարմենին ասում է. «Եթե
 թե դու վաճառես ինձ, յես կսպանեմ քեզ»: Հեռվում

լավում է Եսկամիլիոյի լերդը: Նա Կարմենի համար
 հնչում է իբրև սիրերգ, իսկ Խոզելի սիրտ համար՝ իբ-
 րեւ ծանր, տխուր վերջավորություն:

ՉՈՐՐՈՐԳ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Չորրորդ գործողության օրկեսարային նախերգանքը
 կառուցված է իսպանական ժողովրդական լերդերի
 վրա: Նա հնչում է հանդիսավոր, տոնական:


Հրապարակ Սեվիլիայում: Կրկեսի առաջ հաջադ-
 ված ամբոխը հանդեսի բացման է սպասում: Հնչում
 է հանդիսավոր քայլերդը: Ներս է մտնում օրվա հե-
 րոսը — տորեսոր Եսկամիլիոն: Նրա կողքին ուրախ
 կանգնած է Կարմենը: Յրասկիտան Կարմենին զգա-
 շացնում է, վոր Խոզեն Սեվիլիա չի վերադարձել: Սա-
 կայն Կարմենը հրաժարվում է փախչել նրա վրեժա-
 ութիւնից: Խոզեն սպառնալից նայում է Կարմենի
 աչքերին. օրկեսարից հնչում է Կարմենի ճակատագրի
 թեման: Խոզեն աղաչում է Կարմենին վերադառնալ
 իր մոտ: Կարմենը պատասխանում է. «Ենձնից դու
 սեր մի սպասիր, մեր մեջ ամեն ինչ վերջացած է»:

Կրկեսից լավող տրոմբոնի հնչուհները վողջուհում
 են Եսկամիլիոյին: Կարմենը ուզում է շարժվել դեպի
 կրկեսը: Խոզեն նրան հարցնում է. «Այդպէս ուրեմն,
 դա զնում ես դելի նա, ուրեմն դու նրան ես սիրում»: «Ի՞նչ
 սիրով — ասում է Կարմենը, — անգամ չեթե
 մահը սպառնում է, յես նրան սիրում եմ ու պաշտում»:

29/35
20

Կրկեսում նորից լսվում են ուրախ կանչեր: Կարմենն
աչում է զնալ: «Սպանիր ինձ և կամ թող անցնեմ»
ասում է Կարմենը, մատանին ձգելով խոզեյին: Խո-
զեն զանակով կարմենին սպանում է:

Կրկեսից լսվում են ուրախ ձայներ: Ամբոխը դրո-
վել է վողջ հրապարակը: Ուրախ ֆոնի վրա հնչում է
մռայլ, վողբերգական թեման: Խոզեն սարսափած ընկ-
նում է Կարմենի դիակի վրա, քացականչելով. «ձեր-
բակալեցեք ինձ. նրան լես սպանեցի. ախ, Կարմեն,
խմ թանկագին»:



ՀՀ Ազգային գրադարան



NL0957468

101
1
34